Ուղեցույց

Արմեդ համակարգում Վճարովի ծառայությունների ավելացման վերաբերյալ:

Ներկայացնում ենք վճարովի ծառայությունների ավելացման կարգը Արմեդ համակարգում: Վճարովի ծառայությունները համակարգում ավելացնելու համար հարկավոր է մուտք գործել համակարգ Բուժհաստատության ադմինիստրատոր դերի ներքո առկա Ծառայությունների ցուցակ ֆորմա:



Բացված պատուհանի ձախակողմյան հատվածում կարտացոլվի Ձեր հաստատության անվանումը և բաժանմունքները: Հարկավոր է սեղմել հաստատության անվան վրա, որից հետո էկրանի կենտրոնական հատվածում կարտացոլվի «Ծառայություն +» և excel արտահանման և ներմուծման կոճակները: Ծառայությունների ցանկը հնարավոր է ներմուծել

1. Արմեդի ինտերֆեյսի միջոցով

2. Փաթեթով excell ձևաչափով



Համակարգում արմեդի ինտերֆեյսի միջոցով վճարովի ծառայություններ ավելացնելու համար հարկավոր է սեղմել Ծառայություն + կոճակը: Բացված պատուհանում հնարավորություն ունեք լրացնելու հետևյալ ինֆորմացիան՝



Հարկային կոդ գեներացնելու համար հետևյալ դաշտերը պարտադիր են

- ԱՏԳ կոդ-ազատ լրացման դաշտ է,
- Հարկային կոդ-ազատ լրացման դաշտ է,
- Բաժին-ազատ լրացման դաշտ է,

Մնացած դաշտերը ոչ պարտադիր են լրացման համար:

Բոլոր անհրաժեշտ տվյալները լրացնելուց հետո հարկավոր է սեղմելOK կոճակը:

Աշխատակիցը հնարավորություն ունի խմբագրել վճարովի ծառայությունը կամ սխալ լրացված ծառայությունը հեռացնել համակարգից:

Excel ձևաչափով ծառայություններ մուտքագրելու համար հարկավոր է լրացնել անհրաժեշտ տվյալները կից ներկայացված excel ֆայլում:
Excel-ում պարտադիր է լրացնել հետևյալ սյուների տեղեկատվությունը:

code-Կոդը
name-Ծառայության անվանումը
active_from-Ակտիվացված է
(սյան արժեքը պետք է մուտքագրվի հետևյալ սկզբունքով՝ տարի/ամիս/օր օրինակ՝ 2017/05/28)
active_to-Մինչև
price-Գին
price_from-Գինը սկսած
prce_to-Գինը մինչև
is_active-Ակտիվ է (սյան արժեքը պետք է լրացվի թվանշանով գրելով 1)
tax_code-Հարկային կոդ
tax_section-Բաժին
classifier_code-ԱՏԳ կոդ

Մնացած սյուները ոչ պարտադիր են լրացման համար:

Անհրաժեշտ տեղեկատվությունը excel տարբերակում լրացնելուց հետո հարկավոր է կրկին մուտք լինել Բուժհաստատության ադմինիստրատոր դերի ներքո առկա Ծառայությունների ցուցակ ֆորմա:

Բացված պատուհանում սեղմել Excel ներբեռնման կոճակը, համակարգից ընտրել լրացված և պահպանված ֆայլը և կատարել ներբեռնումը: Եթե կատարվել է ներմուծված ծառայություններում որևէ փոփոխություն, ապա կարող եք նորից լրացնել excel ֆայլը Q սյան արժեքը գրելով update և պահպանելով excel ը նորից ներմուծել համակարգ: Ներբեռնումն իրականացնելուց և էջը թարմացնելուց հետո համակարգում ավտոմատ կերպով կթարմանա ծառայությունը՝ ըստ կատարված փոփոխության: Կից ուղարկվում է նաև լրացման համար անհրաժեշտ excel ֆայլը: